ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ «ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՀՀ-ՌԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ՄԱՐՈՒԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ, ԵՐԵՄ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

2018 թ. ապրիլին Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունը» իր նմանակերպը չունի հետխորհրդային ողջ տարածքում: Հեղափոխության առաջնորդ Ն. Փաշինյանը համախոհների հետ կիրառեց պայքարի ոչ ուժային մեթոդներ՝ անակնկալի բերելով ՀՀ իշխանություններին: Մյուս կողմից՝ ՀՀ քաղաքացիները և հեղափոխության շարժիչ ուժ երիտասարդությունը յուրօրինակ քաղաքական հասունություն, միասնություն և համախմբվածություն դրսևորեցին: Իրադարձությունների սրընթաց զարգացումը, ՀՀ նախկին իշխանությունների վարած քաղաքականությունից համաշխարհային ուժային կենտրոնների հիասթափությունը կանխեցին նրանց կողմից իրադարձություններին միջամտելու հնարավոր փորձը:

Ռուսաստանի համար անսպասելի էր Հարավային Կովկասում իր ռազմավարական դաշնակից Հայաստանում իշխանության հեղափոխական փոփոխությունը: Այդ իսկ պատճառով հեղափոխության հենց սկզբից Մոսկվան որդեգրեց սպասողական դիրքորոշում: ՀՀ նախկին իշխանությունները Կրեմլին հավաստիացնում էին, որ լիովին վերահսկում են իրավիճակը, և հաղթահարելով սկզբնական որոշակի շփոթվածությունը՝ Կրեմլը որոշեց հետևել հետագա զարգացումներին: Մոսկվայի համար պարզ էր, որ հայկական հեղափոխության շարժիչ ուժը բացառապես ներքին քաղաքականությունն է. ՀՀ-ԵՄ համաձայնագիրը խորհրդանշական է և, ի տարբերություն Ռուսաստանի, որը ՀՀ գլխավոր ռազմական և տնտեսական գործընկերն է, Արևմուտքը համարժեք ոչինչ չունի Երևանին առաջարկելու: Ի տարբերություն Ուկրաինայի՝ Հայաստանում ընդդիմության հավաքների և միտինգների ժամանակ չէին ծածանվում ԵՄ-ի կամ ԱՄՆ-ի դրոշները: Հետևաբար Մոսկվայում գտնում էին, որ հայկական «թավշյա հեղափոխությունը» այդ տեսանկյունից էական շտկումներ չի մտցնի ՀՀ-ԵՄ և ՀՀ-ԱՄՆ փոխհարաբերություններում: Ինչպես նշում է Ալեքսանդր Սկակովը, «ՀՀ արտաքին քաղաքական կուրսի փոփոխումը մահացու է ոչ թե Ռուսաստանի, այլ Հայաստանի համար»[1]:

[1] **Скаков А**. Смена политического курса гибельна не для России, а для самой

ՀՀ աշխարհաքաղաքական միջավայրը, Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանները, վերջինիս կողմից ռազմական գործողությունների վերսկսման վտանգը, ինչպես նաև ներքին մարտահրավերները կարևորում են հայ-ռուսական զինակցությունը:

Հասկանալի է, որ Մոսկվայի համար ավելի ձեռնտու կլիներ Ս. Սարգսյանի ձախողումից հետո վարչապետ տեսնել Կ. Կարապետյանին: ՌԴ վարչապետ Դ. Մեդվեդևը Ս. Սարգսյանի հրաժարականից հետո իր աջակցությունը հայտնեց Կ. Կարապետյանին և հայ ժողովրդին՝ հույս հայտնելով, որ իրադարձությունները կզարգանան իրավական դաշտում[2]: ՌԴ Պետդումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինը հայտարարեց, որ Ս. Սարգսյանի հրաժարականը ՀՀ ներքին հարց է, բայց ստեղծված իրավիճակը անհանգստացնում է իրեն: Իսկ «Եդինայա Ռոսիա» կուսակցության գերագույն խորհրդի քարտուղարի տեղակալ Ս. Ժելեզնյակը նշեց, որ չի կարելի թույլ տալ, որ ճգնաժամային իրավիճակից օգտվեն ապակառուցողական ուժերը[3]: Ի վերջո, Կրեմլում հասկացան, որ պետք է համագործակցել Ն. Փաշինյանի հետ: Պաշտոնական մակարդակով ռուսական կողմը հայկական նոր իշխանություններին վերաբերվեց զուսպ, իսկ ավելի ստույգ՝ չեզոք դրական: Փաշինյանի ընտրվելուց հետո նրան շնորհավորեցին Վ. Պուտինը և Դ. Մեդվեդևը: Ռուսական ԶԼՄ-ում, հեռուստատեսային տարբեր ծրագրերում հայկական թեմաներով քննարկումները դադարեցին: Ռուս հասարակության մեջ կարծիք ձևավորվեց, որ ոչինչ չի փոխվելու երկու երկրների հարաբերություններում, իսկ քաղաքական և փորձագիտական շրջանակներում չկար միասնական կարծիք, թե ինչ մարտավարություն պետք է ընտրել ՀՀ նոր իշխանությունների նկատմամբ: Դա բացատրվում է մի շարք գործոններով: Նախ և առաջ Մոսկվան վերջին 20 տարում վարժվել էր, որ պաշտոնական Երևանը իր անտրտունջ դաշնակիցն է, որը հաճախ նույնիսկ «անհարմար» է զգում բարձրաձայնել իր խնդիրները: Մյուս կողմից նրանց համար ՀՀ ներքաղաքական գործընթացները տեսականորեն նույնական էին «Բոլոտնայա հրապարակում» պարբերաբար տեղի ունեցող բողոքի ցույցերին, որոնց ժամանակ հնչում էին հակակառավարական կոչեր, ազատությունների և օրինականության պահանջներ: Ապրիլյան պատերազմից հետո ՌԴ-ում հասկացան, որ իրենց դաշնակցի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը պետք է փոխվի: Այն օրակարգի խնդիր դարձավ, երբ թավշյա հեղափոխությունից հետո Ռուսաստանի Դաշնության առջև կանգնեց որակապես նոր Հայաստան: Կրեմլում գիտակցեցին, որ Հայաստանի Հանրապետության նոր իշխանությունների հետ պետք է

Армении // verelq.am/ru/node/37658

[2] Տե՛ս «"Бархатная революция" в Армении: взгляд из Москвы» // https://m.ru.armeniasputnik.am/Russia/20180426/11707141/barhatnaya-revolyuciya-v-armenii-vzglyad-iz-moskvy.html?mobile_return=no

[3] Տե՛ս նույն տեղը:

իրականացնել նոր որակի քաղաքականություն: Այդ մոտեցումները Կրեմլում դեռևս լիովին չեն մշակվել, և այդ իսկ պատճառով ՀՀ-ՌԴ հարաբերություններում մենք ականատես ենք լինում միանգամայն իրարամերժ քայլերի:

Եթե ռուսաստանյան ազատական և ձախակենտրոն շրջանակներում ՀՀ-ում տեղի ունեցած իրադարձությունների մասին հանդիպում ենք իրարամերժ կարծիքների՝ ոգևորությունից մինչև հոռետեսություն, ապա հակաարևմտյան, ադրբեջանական և ՌԴ ռազմաարդյունաբերական լոբբիի կողմից վերահսկվող լրատվամիջոցներում հայաստանյան իրադարձությունները ներկայացվում են ոչ օբյեկտիվ և խեղաթյուրված: Լինում են նույնիսկ սադրանքներ: Դրանցից կարելի է հիշատակել 2018 թ. ապրիլի 26-ին և մայիսի 3-ին բավական մեծ լսարան ունեցող «Կոմսոմոլսկայա պրավդա» ռադիոկայանի եթերում Մ. Լեոնտևի տխրահռչակ ելույթը, որը փորձեց «հարթել» ՌԴ նախագահի մամլո քարտուղար Դ. Պեսկովը՝ հայտարարելով, որ դրանք չեն արտացոլում Մոսկվայի պաշտոնական տեսակետը[4]: Նման սադրանքների կողքին կային նաև դրական վերլուծություններ: «Դոժդ» հեռուստաալիքի լոգոտիպին այդ օրերին հայտնվել էր հայկական եռագույնը, «Էխո Մոսկվի» ռադիոկայանով ի նպաստ հայերի հանդես եկավ ռուս հայտնի հրապարակախոս Անտոն Օրեխը: ՌԴ մի շարք քաղաքներում ցուցարարները վանկարկում էին՝ «Ուզում ենք ինչպես Հայաստանում»[5]:

Այդ տեսանկյունից ցանկանում ենք առանձնացնել դիվանագետ, Մոսկվայի հումանիտար համալսարանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Նիկոլայ Պլատոշկինի մոտեցումները: Նա 1998 թ.-ից մոտ 3 տարի ՌԴ ԱԳՆ-ում գլխավորել է Հայաստանի Հանրապետության բաժինը: Նրա կարծիքով՝ հայկական հեղափոխությունը սխալ է համեմատել ուկրաինականի հետ, քանի որ իրենց բնույթով ու էությամբ նրանք միանգամայն տարբեր են: Հայաստանը ՌԴ մերձավորագույն դաշնակիցն է, և Կրեմլը պետք է հաշվի առնի ուկրաինական դասերը: ՌԴ-ն, պաշտպանելով Յանուկովիչին, ուժեղացրեց հակառուսական տրամադրությունները այդ երկրում: Նրա կարծիքով՝ Մոսկվան չպետք է պաշտպանի ՀՀ կոռումպացված ղեկավարությանը, որը ռուսամետ էր միայն ձևականորեն: Նա նշում է, որ հասկանում է Մոսկվայի «նեղանալու» առիթը, քանի որ Հայաստանում, առանց հաշվի առնելու իր կարծիքը, «ինքնուրույն» իշխանափոխություն են իրականացրել, ուստի նկատի ունենալով ՌԴ-ՀՀ ռազմավարական համագործակցությունը՝ Մոսկվան չպետք է սպառազինություն վաճառի Ադրբեջանին: Նա գտնում է, որ Ն. Փաշինյանը, դառնալով վարչապետ, որպես իրատես քաղաքա-

[4] Տե՛ս «Провоцируют или завидуют: российские общественные настроения по поводу армянской революции» // https://www.aravot.ru.am/2018/05/09/273085

[5] Նույն տեղում:

կան գործիչ՝ ցանկանում էր նոր մակարդակի բարձրացնել հայ-ռուսական հարաբերությունները: Աջակցելով հայ ժողովրդի քաղաքակիրթ, ժողովրդավարական ընտրությանը՝ ՌԴ-ն կբարձրացնի նաև իր միջազգային վարկը, եզրակացնում է Ն. Պլատոշկինը[6]:

Իսկ ի՞նչ քայլեր էին ձեռնարկում ՀՀ նոր իշխանությունները իրենց կառավարման առաջին շրջանում: Հունիս-օգոստոս ամիսներին հայկական ԶԼՄ-ում մոտ 70 %-ով նվազեցին հակառուսական հրապարակումները[7]: Մոսկվայի հիմնական բացթողումներից կարելի է համարել այն, որ ՀՀ քաղաքական դաշտում նա աշխատել էր միայն քաղաքական վերնախավի հետ՝ անտեսելով ընդդիմությանը: Այդ «ինքնամեկուսացման» հետևանքով, բնականաբար, ավելի լայն գործունեություն ծավալելու հնարավորություններ ստացան Արևմուտքից օժանդակություն ստացող տարբեր ՀԿ-ներ: Մոսկվային առաջին անհանգստացնող փաստը Ն. Փաշինյանի կաղրային քաղաքականությունն էր, որը Կրեմլում համարեցին շրջադարձ դեպի Արևմուտք: Մյուս անհանգստացնող հանգամանքը ՀՀ-ՆԱՏՕ և ՀՀ-Արևմուտք հարաբերություններն էին: Մոսկվայի համար ցանկալի կլիներ նաև ՀՀ արտահերթ ընտրությունների անցկացումը 2019 թ. գարնանը, այլ ոչ թե 2018 թ. դեկտեմբերին, քանի որ քաղաքական դաշտը ամայացած էր (ոչ Ն. Փաշինյանի մեղքով), իսկ գարնանային ընտրությունները հնարավորություն կտային ռուսամետ ուժերին համախմբվելու:

Իսկ ի՞նչ ձեռնարկեցին ՀՀ նոր իշխանությունները պաշտոնական Մոսկվայի այդ տարակուսանքներն ու անվստահությունը փարատելու համար: Կարճ ժամանակահատվածում Ն. Փաշինյանը երեք անգամ հանդիպեց և բազմաթիվ հեռախոսազրույցներ ունեցավ Վ. Պուտինի հետ: Պատահական չէ, որ Ն. Փաշինյանը հայ-ռուսական հարաբերությունների մասին ընդգծված խոսում էր արևմտյան լրատվամիջոցներին տված հարցազրույցներում:

2018 թ. մայիսի 30-ին «Deutshe Welle»[8] և 2018 թ. հուլիսի 12-ին «Euronews»[9] լրատվամիջոցներին տված հարցազրույցներում նա ընդգծեց, որ Հայաստանը շարժվում է իր ազգային շահերով և արտաքին քաղաքականությունում ոչինչ փոխել չի պատրաստվում: 2018 թ. հուլիսի 12-ին Ն. Փաշինյանը առաջին անգամ պաշտոնական այցով ժամանեց Բրյուսել: «Էխո Մոսկվի» ռադիոկայանին տված հարցազրույցում նա

---

[6] Տե՛ս **Платошкин Н.** Русским об армянах: уроки для России // https://www.facebook.com/platoshkin.nikolay/videos/1054088858093295/

[7] Տե՛ս «Мониторинг: армяно-российские отношения глазами СМИ двух стран после «бархатной революции в Армении» // www.kavkazoved.info/news/2018/09/29/armjanorossijskie-otnoshenia-glazami:smi-dvuh-stran-posle-barhatnoy-revolucii-v-armenii.html.stran-posle-barhatnoy-revolucii-v-armenii.html

[8] Տե՛ս «Интервью Никола Пашиняна немецкой Deutshe Welle» // https:/news.am/rus/videos/15351/html

[9] Տե՛ս «Армения: с НАТО или с Россией» // https//ru.euronews.com/video/2018/07/12/Armenian-pm-pashinyan–itw

նշեց, որ ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը սկսվել է վաղուց, և ռազմաքաղաքական այդ կառույցի շրջանակներում ՀՀ-ն մասնակցել է Աֆղանստանում և Կոսովոյում իրականացված խաղաղարար առաքելություններին: Այն կարևորվում է տարածաշրջանային, ինչպես նաև Վրաստանի հետ հարաբերությունների տեսանկյունից: Նա նաև ավելացրեց, որ ՀՀ-ն մասնակցել է ոչ թե ՆԱՏՕ-ի գագաթնաժողովին, այլ երկրների ղեկավարների Աֆղանստանի խաղաղարար առաքելությանը նվիրված հանդիպմանը[10]: Բրյուսելում Ն. Փաշինյանը հստակ ընդգծեց, որ ՀՀ-ն շարունակելու է մնալ ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի լիարժեք անդամ: ՀՀ-ն ընդգրկված է ՀԱՊԿ անվտանգության համակարգում, իսկ Եվրասիական տնտեսական միությունը լայն հնարավորություններ է ընձեռում երկրի տնտեսական զարգացման համար: Նա նաև հույս հայտնեց, որ Հայաստանը՝ որպես հուսալի գործընկեր, կարող է կապող օղակ դառնալ եվրոպական և եվրասիական ինտեգրացիոն միությունների համար[11]:

Միաժամանակ Ն. Փաշինյանը անընդմեջ բարձրաձայնում էր ՀԱՊԿ- ում փոխադարձ պարտավորությունների հստակեցման խնդիրը, անդրադառնում իր ռազմական դաշնակիցների կողմից Ադրբեջանին սպառազինություններ մատակարարարելու խնդրին:

Մոսկվան լռություն պահպանեց մինչև ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յու. Խաչատուրովի և ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի ձերբակալությունները: Մեր կարծիքով՝ Յու. Խաչատուրովի ձերբակալման հարցում ՀՀ իշխանությունները դրսևորեցին շտապողականություն. այն պետք է դիվանագիտական խողովակներով լավագույնս նախապատրաստվեր: Այս հանգամանքից փորձեցին օգտվել Բաքուն, Անկարան, Մինսկը և Աստանան: 2018 թ. օգոստոսի 22-ին Վ. Պուտինի հետ Սոչիում կայացած հանդիպման ժամանակ Ա. Լուկաշենկոն նշեց, որ առաջարկել է ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարի այլ թեկնածություն, սակայն Վ. Պուտինը ժամանակին չի լսել իր խորհուրդը[12]: Այս հանգամանքն անմիջապես օգտագործեցին Աստանան և Մինսկը՝ Մոսկվայի հետ իրենց խնդիրները քննարկելու և նրանից նոր զիջումներ կորզելու համար: Այդ «ճնշումներից» հետո Ռուսաստանը ստիպված էր կոշտ արձագանքել պաշտոնական Երևանի գործողություններին: Հուլիսի 31-ին ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովը հայտարարեց. «Հայաստանում տեղի ունեցող գործընթացները չեն կարող չանհանգստացնել Մոսկվային, ինչի կապակցությամբ վերջին օրերին մեր մտահոգությունն ենք մի քանի անգամ հայտնել հայկական ղեկավարությանը»[13]:

---

[10] Տե՛ս «Пашинян Никол. Интервью "Эхо Москвы". 25.07.2018» // https//echo.msk.ru/programs/beseda/2246298-echo/

[11] Տե՛ս «Армения: с НАТО или с Россией» // https//ru.euronews.com/video/2018/07/12/Armenian-pm-pashinyan-itw

[12] Տե՛ս «Лукашенко внес еще одну интригу в дело Хачатурова» // https://www.lragir.am/ru/2018/08/27/132455

[13] «Ответ Лаврову? 17 августа Никол Пашинян проведет митинг» // https/regnum.

Առաջացած իրավիճակից չհապաղեց օգտվել նաև Ադրբեջանը: Ստանալով Ղազախստանի և Բելառուսի նախագահների օժանդակությունը՝ տարբեր հարթակներում սկսեց քննարկել ՀԱՊԿ-ին Ադրբեջանի հնարավոր անդամակցության հարցը, ինչպես նաև խոչընդոտել, որ ՀՀ իշխանությունները ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարի պաշտոնում առաջադրեն նոր թեկնածուի: Պատահական չէ, որ այդ ընթացքում Ռուսաստանում ակտիվացան ադրբեջանամետ շրջանակները: Այս ամենը և հետագա զարգացումները հնարավոր չէին առանց պաշտոնական Մոսկվայի որոշակի շրջանակների համաձայնության: Արցախի սահմանների անմիջական հարևանությամբ՝ իբր ապրիլյան պատերազմի շրջանում ազատագրված տարածքում, կազմակերպվեց «Հարավային Կովկասում Ադրբեջանը Ռուսաստանի միակ դաշնակիցն է» խորագրով գիտաժողով: Մասնակիցների թվում էին Ա. Դուգինը, Մ. Շենչենկոն, Ի. Կորոտչենկոն, Ա. Եզուբովը («Եդինայա Ռոսիա»), Դ. Սավելևը (ՌԼԴԿ), ինչպես նաև «Միջազգային եվրասիական շարժում» և «Իզբորյան ակումբ» կազմակերպության բազմաթիվ ներկայացուցիչներ[14]: 2018 թ. հոկտեմբերի 19-ին, ելույթ ունենալով CBC TV Azerbajjan հեռուստատեսությամբ, Ա. Դուգինը հայտարարեց, որ Հայաստանում Ռուսաստանի ազդեցությունը մեծացնելու ամենաարդյունավետ ձևը Ադրբեջանի հետ ռազմավարական դաշնակցային հարաբերությունների խորացումն է՝ ի հաշիվ Երևանի[15]:

Սակայն պաշտոնական Մոսկվան առավել սթափ է գնահատում իրավիճակը՝ հասկանալով, որ համենայն դեպս մոտակա ժամանակահատվածում ՀՀ քաղաքական դաշտում Ն. Փաշինյանը մրցակից չունի: Ինչպես Ռուսաստանը Երևանի համար, այնպես էլ Հայաստանը Մոսկվայի համար տարածաշրջանային բարդ գործընթացների համատեքստում կարևորագույն դաշնակից է: Ն. Փաշինյանը, ունենալով ՀՀ բնակչության զգալի մասի և հայկական սփյուռքի անվերապահ աջակցությունը, ի զորու է վարել ՀՀ ազգային շահերից բխող ինքնուրույն քաղաքականություն, որը, ի դեպ, չի հակասում ՌԴ շահերին: Մոսկվան համոզվեց դրանում, երբ չարդարացան Արևմուտքի այն ակնկալիքները, որ «թավշյա հեղափոխությունից» հետո Հայաստանը կգնա Վրաստանի կամ Ուկրաինայի ճանապարհով: Ջեյմսթաունի հիմնադրամի (ԱՄՆ) փորձագետ Վլադիմիր Սոկորը, արտահայտելով Արևմուտքի այդ շրջանակների կարծիքը և «հիասթափությունը», նշում է. «Հայաստանում գունավոր հեղափոխություն տեղի չի ունեցել, քանի որ հետխորհրդային պետություններում դրանք իրականանում են Ռուսաստանի ազդեցության ոլորտից դուրս գալու կարգախոսներով: Իսկ Ն.

---

ru/news/ 2457572. html

[14] Տե՛ս Vesti kavkaza.ru/news/konferentsiya-Azerbaydzhan-edinstvennyy-soyuznik-Rossii-na-Kavkaze-sostoyalas-v-Dahodhug-Mardzhenly.html

[15] Տե՛ս **Дугин А.** Резкий переход на антироссийскую позицию грозит Армении несуществованием // https://youtube//EDtQW1v3E8

Փաշինյանը և նրա համախոհները առիթը բաց չեն թողնում Ռուսաստանին վստահեցնելու, որ պահպանելու են նրա հետ դաշինքը»[16]:

Ն. Փաշինյանի կառավարության ինքնուրույն արտաքին քաղաքականությունը և հուսալիությունը դրսևորվեցին ՌԴ հետ հարաբերություններում: Դրա վառ օրինակներն են հայկական ԶԼՄ-ում հակառուսական շեշտադրումների թուլացումը, Ղրիմի խնդրի շուրջ ՄԱԿ-ում ՀՀ դիրքորոշումը և քվեարկությունը, Սիրիայում ՌԴ իրականացրած առաքելությունում հայկական ուժերի ներգրավումը: Այստեղ հարկ ենք համարում ընդգծել, որ ռուս - ամերիկյան ներկա լարված պայմաններում նույնիսկ ՌԴ մերձավորագույն դաշնակիցներ Բելառուսը և Ղազախստանը չհամարձակվեցին դիմելու նման քայլի:

Ե՛վ Մոսկվան, և՛ Երևանը փորձում են արհեստական լարվածություն չհաղորդել երկկողմ հարաբերություններին, իսկ առկա քաղաքական որոշ տարաձայնությունները հարթել անաղմուկ: Ինչ վերաբերում է այդ հարաբերությունները սրելու արտաքին ուժերի փորձերին, ապա դրանք դատապարտված են ձախողման, քանի որ ռուս–հայկական ներկայիս հակասությունները ավելի շատ իրավիճակային, քան թե ռազմավարական բնույթի են: Այդ մասին է վկայում Կրեմլի պաշտոնական շրջանակներին բավական մոտ կանգնած, ԵԱՏՄ ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Վ. Լեպեխինի հարցազրույցը. նա կարծում է, որ ստեղծված իրավիճակում Ռուսաստանը Ն. Փաշինյանից չի պահանջում ռուսամետ քաղաքականություն, սակայն ձգտում է հստակության[17]:

Մոսկվայում հասկացել են, որ վերադարձ Ս. Սարգսյանի նախագահության շրջանին բնորոշ հայ-ռուսական հարաբերություններին հնարավոր չէ, և խնդիրը նոր սկզբունքների հիման վրա դրանց նոր թափ հաղորդելն է:

Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականության պայմաններում Ն. Փաշինյանը իրականացրեց ևս մեկ փայլուն դիվանագիտական քայլ: Մի կողմից նշելով, որ Ադրբեջանի նման քաղաքականության պայմաններում Հայաստանը պետք է պատրաստ լինի պատերազմի, մյուս կողմից ընդգծեց, որ Հայաստանում և Սփյուռքում բոլորը վստահ են, որ ՌԴ-ն բոլոր միջոցներն ունի սաստելու Ադրբեջանին և թույլ չտալու, որ լարվածությունը տարածաշրջանում աճի: Ռուսաստանը նաև բոլոր միջոցներն ու լծակներն ունի, որ կանխի Ադրբեջանի հարձակումը Հայաստանի կամ Ղարաբաղի վրա, և նա այդ կերպ կվարվի, քանի որ ՀՀ ռազմավարական բարեկամն է, մեր դարավոր եղբայրը և բարեկամը[18]: Այս հայտարարությամբ նշվեց, թե ով է պատրաստվում պատերազմի և հստակ գնահատա-

---

[16] **Сокор В.** Пашинян, как и Саргсян, – пленник России // https//inosmi.ru/politic/20180524/ 242305462.html

[17] Տե՛ս Verelq News. «Россия не требует от Пашиняна пророссийской политики, но хочет ясности» // verelq.am/ru/node/37195

[18] Տե՛ս Интервью Никола Пашиняна радио «Эхо Москвы». 25.07.2018 // https//echo.msk.ru/programs/beseda/2246298-echo/

կան տրվեց ՌԴ մոտեցումներին և դաշնակցային հարաբերություններին :

ՀՀ-ի նկատմամբ ՌԴ-ի մոտեցումների փոփոխության մասին է վկայում ևս մեկ փաստ, որը զարմանալիորեն անուշադրության մատնվեց ՀՀ փորձագիտական շրջանակների կողմից: 2018 թ. հոկտեմբերի 9-ին Երևանում տեղի ունեցավ ՌԴ Պետդումայի ԱՊՀ գործերի, եվրաինտեգրման և հայրենակիցների հարցերի հանձնաժողովի նախագահ Կոնստանտին Զատուլինի հանդիպումը ԱԺ նախագահ Արա Բաբլոյանի հետ: Զատուլինը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ՝ երկու երկրների պետական, գիտական, մշակութային և հանրային ոլորտներում ոչ ֆորմալ՝ առավել անմիջական բնույթի հաղորդակցության նոր հարթակ ստեղծելու, որը կոչվեց «Լազարյան» ակումբ[19]: Այսպիսով Մոսկվան փակում է տխրահռչակ «Գրիբոյեդով» ակումբը, որը նպաստելու փոխարեն խոչընդոտեց հայ - ռուսական հարաբերությունների հետագա ընդլայնումը:

Կ. Զատուլինի նոր նախաձեռնությունը մեկ անգամ ևս փաստում է, որ Հայաստանի դերն ու նշանակությունը Մոսկվայում վերահիմաստավորում են՝ ձգտելով հանրային և քաղաքական ավելի լայն շրջանակներ ընդգրկել այդ ակումբում և նոր ձևաչափով շարունակել համագործակցությունը:

Այսպիսով, հայկական հեղափոխության շարժիչ ուժը ներքին քաղաքականությունն է, և հետհեղափոխական շրջանում ՀՀ արտաքին կողմնորոշիչները չեն փոխվել:

Հայկական «թավշյա հեղափոխության» ընթացքում ՌԴ-ն չմիջամտեց՝ մի կողմից նկատի ունենալով ուկրաինական անհաջող փորձը և դասերը, իսկ մյուս կողմից՝ կասկածելով միջամտության արդյունավետության վրա, քանի որ ՀՀԿ-ին այլևս փրկել հնարավոր չէր, իսկ ժողովրդական լայն զանգվածներն աջակցում էին Ն. Փաշինյանին:

ՌԴ-ն ՀՀ նոր իշխանություններին սկզբնական շրջանում չեզոք դրական էր վերաբերվում, որովհետև, ի տարբերություն այլ գունավոր հեղափոխությունների, Երևանը հայտարարեց, որ պահպանելու է ստատուս քվոն: Այդ տեսանկյունից Մոսկվային ավելի շատ հետաքրքրում էր աշխարհաքաղաքական հավասարակշռության պահպանումը, քան նոր իշխանությունների «ոճը»:

Հեղափոխական լայն զանգվածներն ըմբռնում էին, որ երկրում ժողովրդավարության հետագա խորացումը ավելի շատ պայմանավորված է ներքաղաքական գործոններով, քան ՌԴ գործողություններով: Հետևաբար արտաքին քաղաքականության կողմնորոշիչների անփոփոխ մնալն ըմբռնումով ընդունվեց:

Կրեմլում գիտակցում են, որ ներկայումս իրենց առջև կանգնած է որակապես նոր դաշնակից, որի հետ պետք է նոր ձևաչափով աշխատել: Ռուս-հայկական ընթացիկ տարաձայնությունները իրենց բնույ-

[19] Տե՛ս «Մոսկվան ընդունեց տապալումը. նոր նախաձեռնություն Երևանում» // https/www.lragir.am/2018/10/09/3854601

թով ոչ թե համակարգային, ռազմավարական, այլ իրավիճակային են: Հետևաբար հայ-ռուսական հարաբերությունների դինամիկան ստեղծված աշխարհաքաղաքական միջավարում դառնալու է առավել պրագմատիկ և փոխշահավետ:

Բանալի բառեր – *Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, «թավշյա հեղափոխություն», Արևմուտք, ՀԱՊԿ, ԵԱՏՄ, ՆԱՏՕ, ԵՄ*

МАРУТ ВАРДАЗАРЯН, ЕРЕМ ВАРДАЗАРЯН – ***Армянская «бархатная революция» и динамика развития отношений РА–РФ.*** – Движущая сила «бархатной революции» и постреволюционного периода – внутренняя политика; что касается основных внешнеполитических ориентаций, то они не изменились. Во время событий в Армении Российская Федерация заняла нейтрально-положительную позицию, учитывая, с одной стороны, украинский опыт, а с другой – поддержку и симпатию, которой пользовалась армянская оппозиция у подавляющего большинства населения. В отличие от «цветных революций» на постсоветском пространстве, Ереван объявил о сохранении статус-кво. Геополитическое равновесие вокруг России не нарушилось. При этом население Армении в большинстве своём понимало, что углубление демократии в стране зависит от внутренних факторов, а не от позиции РФ. Российско-армянские разногласия после революции носят не столько стратегический, сколько ситуационный характер. В Кремле сознают, что союзник качественно изменился и с ним нужно работать в новом формате. В сложной международной и региональной обстановке армяно-российские отношения будут развиваться по нарастающей, становясь более взаимовыгодными и прагматичными.

Ключевые слова: *Республика Армения, Российская Федерация, «бархатная революция», Запад, ОДКБ, ЕАЭС, НАТО, ЕС*

MARUT VARDAZARYAN, EREM VARDAZARYAN – ***Armenian "Velvet Revolution" and the Dynamics of the Relationship Development between the Republic Of Armenia and the Russian Federation.*** **–** The driving factor of the Armenian "Velvet Revolution" was domestic politics in the post-revolutionary stage, the foreign policy agenda of the Republic of Armenia (RA) did not change significantly. During the Armenian Revolution, the Russian Federation (RF) did not intervene, considering its experience with Ukraine and the massive support for Armenian opposition by the local population. Unlike other colour revolutions, Yerevan announced that it will maintain status-quo. From that perspective, the geopolitical balance in the region was maintained for the RF. At the same time, the population of RA perceived that the roots of this democratic movement are the domestic factors and are not related to the RF actions. In the post-revolutionary stage, the disputes between the RA and RF are more situational rather than strategic in nature. Kremlin perceives that they should deal with their ally differently, considering that in terms of quality they have a new ally before them. Armenia-Russia relations will continue advancing in the international and regional complicated condition and become mutually more beneficial and pragmatic.

Key words: *Republic of Armenia, Russian Federation, «Velvet Revolution», West, CSTO, EAEU, NATO, EU*

Ներկայացվել է՝ 29.10.2018, գրախոսվել է՝ 07.03.2019, ընդունվել է տպագրության՝ 26.04.2019